

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 183

Քրիստոնէական կեանքը մի հետաքրքիր կեանք է, քանի որ այն հակադրութիւնների մի կեանք է: Այն թէ խաղաղութեան եւ թէ պատերազմական մի կեանք է: Մինչդեռ չփրկւած մարդը Աստուծոյ հետ պատերազմի մէջ է եւ մեղքի հետ խաղաղ ու հաշտ, Քրիստոնէան Աստուծոյ հետ խաղաղ ու հաշտ է (Հռովմայեցիս 5:1) եւ մեղքի դէմ պատերազմի մէջ (Գաղատացիս 5:16-17):

**Քրիստոնէայի թշնամիներ** – Մարտին Լութերը ասեց թէ հաւատացեալներ ընդդիմանում են երեք թշնամիներին՝ աշխարհքին, մարմնին, ու դեւին: Նախքան Քրիստոսը, մենք լիովին գերի էինք այս բոլոր ուժերին՝ հետեւելով ու հնազանդելով իրենց թելադրումներին (Եփեսացիս 2:1-3): Բայց Քրիստոսը յաղթահարել է աշխարհքին, մարմնին, ու դեւին, եւ ազատել է մեզ իրենց տիրապետութիւնից ու զօրութիւնից. եւ որպէս Քրիստոնէաներ մենք հիմա զբաղւած ենք դրանց դէմ եղած մի շարունակական պայքարի մէջ: Մենք նկատում ենք որ սրանցից երկուսը արտաքին թշնամիներ են՝ աշխարհքն ու դեւը, եւ մէկը ներքին՝ մարմինը: Թէկուզ մենք կարող ենք զանազանել դրանց, սակայն երեքն էլ փոխկապակցւած են, եւ աշխատում են միասին հակառակելու Քրիստոնէային:

**Աշխարհքը** – Քրիստոնէայի առաջին գլխաւոր թշնամին աշխարհքն է: Ասելով որ աշխարհքը Քրիստոնէայի թշնամին է, մենք չենք խօսում Աստուծոյ ստեղծագործութեան առթիւ՝ որը սկզբնապէս «շատ բարի» էր (Ծննդոց 1:31): Փոխարէն, մենք նկատի ունենք ընկած աշխարհքի կարգադրութիւնը (սիստեմը) որը Աստուծոյ դէմն է՝ այսինքն մշակոյթը, սկզբունքները, սովորութիւնները, հանգամանքները, սիստեմը կամ կեանքի ճանապարհը որոնք թշնամական ու հակառակ են Աստուծոյ, Իր ճշմարտութեան, եւ բոլոր Իր հետեւորդների դէմ (Յովհաննէս 15:18-19, 16:33, Բ. Տիմոթէոս 3:12, Ա. Յովհաննէս 2:15-17):

**Մարմինը** – Քրիստոնէայի երկրորդ գլխաւոր թշնամին մարմինն է (Հռովմայեցիս 8:4-8, Եփեսացիս 2:3): Ակնարկելով մարմինը մենք չենք խօսում մեր ֆիզիքական մարմինների մասին: Այսպէս թիւրիմացութիւն եկեղեցու պատմութեան ընթացքում յառաջացրել է այդ ուսուցումը թէ մեր հոգիները բարի են իսկ մեր ֆիզիքական մարմինները չար: Մա սակայն մի աստուածաշնչային գաղափար չի այլ մի գաղափար որը Քրիստոնէական մտածելակերպի մէջ մուտք գործեց Յունական փիլիսոփայութիւնից՝ որը ուսուցանեց թէ հոգեւորը բարի ու սուրբ է, իսկ ֆիզիքականը (նիւթականը) անկատար ու անցանկալի:

Հակառակ սրան, Աստուածաշունչը յստակօրէն սովորեցնում է Աստուծոյ ֆիզիքական ստեղծագործութեան էական բարութիւնը՝ ներառեալ մեր ֆիզիքական մարմինները: Ու նոյնիսկ թէկուզ անկման հետեւանքով մեր մարմինները նաեւ ընկած են, սակայն նրանք բնականաբար, իրենք իրենցից, չար չեն: Ուրեմն, խօսելով մարմնի մասին Պօղոսը ակնարկում է մեղքի մնացորդը որը դեռ մեր մէջ է, որը մնում է մեր մէջ այս կեանքում մինչեւ մեր փառաւորումը: Մեր ընկած բնութիւնը Աստուծոյ հակառակ է, եւ ազդում է ոչ միայն մեր մարմինը, այլ նաեւ մեր միտքը, սիրտը ու հոգին: Ըստ այն, մեղքը ծագում է ոչ թէ ֆիզիքական մարմնից այլ մեր մնացած ընկած կամ մեղաւոր բնութիւնից՝ որը արտայայտւում է ոչ միայն մեր մարմինների գործերի միջոցով, այլեւ չար մտքերի, ցանկութիւնների, ու սրտի կեցածքի միջոցով (Բ. Կորնթացիս 7:1):

Ուրեմն երբ Պօղոսը խօսում է Քրիստոնէական կեանքում մարմնի ու Հոգու միջեւ եղած պայքարի մասին, նա չի ակնարկում մեր մարմնի ու հոգու միջեւ եղած պայքարին. փոխարէն, նա խօսում է մեր ընկած բնութեան ու Սուրբ Հոգու միջեւ եղած պատերազմի առթիւ (Գաղատացիս 5:16-17)՝ մեր մեղաւոր եւ հոգեւոր բնութիւնների միջեւ, մեր հին կեանքի՝ որը ուզում է տիրել մեզ նորից, եւ Սուրբ Հոգով ստեղծւած ու պահպանւած նոր կեանքի միջեւ:

**Դեւը** – Վերջապէս, Քրիստոնէայի երրորդ գլխաւոր թշնամին դեւն է: Ծատ քիչ մարդիկ կան որոնք հաւատում են (ընդունում են) մի անձնական էակի գոյութեան ճանաչւած որպէս դեւը կամ Սատանան: Սատանան մեծաւ մասամբ աքսորել է (ենթարկել է) հեքիաթի կամ առասպելութեան շրջանին: Հակառակ այսպէս հասկացողութեան, Աստուածաշունչը յստակօրէն հաստատում է դեւի գոյութիւնը (Մատթէոս 4:3, 8:28-33, 9:32-33, Յովհաննէս 8:44, Բ. Կորնթացիս 4:3-4, 11:14, Եփեսացիս 2:2, Ա. Պետրոս 5:8, Ա. Յովհաննէս 5:19, Յայտնութիւն 12:9-10): Սատանան եւ նրա ծառաները իրական են ու զօրաւոր, խորամանկ ու խաբուսիկ, եւ անում են ամեն բան որ կարող են որպէսզի հակառակել Աստուծոյ, խափանել Նրա ծրագրերը, աղաւաղել Նրա Խօսքը, տարածել կեղծ կրօն եւ աստուածաբանութիւն, պահել անհաւատներին իրենց իշխանութեան տակ, փորձել, ճնշել ու հալածել հաւատացեալներին որպէսզի խանգարել նրանց հոգեւոր աճը, եւ յառաջացնել բաժանում եւ անհամաձայնութիւն եկեղեցու մէջ (Եփեսացիս 4:25-27):

Եթէ պայքարում ես մեղքի հետ, իմացիր որ այսպէս մի պայքարը սովորական Քրիստոնէական կեանքի յատկանիշն է. եւ իրականում այդ մի նշան է որ դու հաւատացեալ ես՝ մէկը որ Քրիստոսումն է ու ոչ Ադամում, որովհետեւ ոչ վերածնւածները չունեն մեղքի դէմ եղած որեւէ այսպիսի պայքար: